

Գ Բ Ա Յ Ի Ն

“Nostalgic” շարքից

Ամեն առաւօտ եւ դուրս եմ գալիս պատշգամ: Գիմարում եմ Արեւ: Տունը, թեպետ Պորճ Հա- մուտի խիստ բնակեցումը կերտում է, սակայն պատշգամներից մէկը բակ է նայում: Իսկ պատշգա- մին նայում է ծառը: Ծառը փթթում, հիասքանչօրէն ծաղկած սաղարթ ունի եւ փոքր ողկոյզների նման դեղնականաչ ծաղիկներ: Նրանք ծաղկում են Փետր- արին: Փետրարին, երբ գալիս է թիթեղը՝ այստեղ արդէն գարուն է: Ծառի ետեւից երեւում է դիմացի շէնքի պատշգամը, որում գրեթէ իր ամբողջ օրն է ապրում շունը: Վեհ կեցումը, խելամիտ աչքե- րով այս խոշոր, գեղեցիկ կենդանին բազմում է յա- տուկ իր համար դրամ բազկաթոռին եւ զննիչ ու- սումնասիրում շուրջը շուրջը: Երբ համոզում է, որ ամէն ինչ հանգիստ է՝ սիրուն աչքերը վրաս է հա- րում: Եւ թուն է՝ սկսում է նրա անվերջանալի մե- ճախօտութիւնը՝ ու՛, մա՛րդ արարած, քե՛զ հետ եմ, չե՛ս յամու ինչ է...:

Երբ ամէն առաւօտ պատշգամ եմ ելնում, տնեցի- ներս դեռ քնած են լինում: Նստում եմ այգածեզի նարնջալոյս լուրջեան մէջ եւ խօսում... Ծառի հետ, շան հետ, Արեւակի հետ: Իրաքանչիւր առաւօտ նոյն ժամին իր պատշգամն է ելնում դրացին: Արա- տարեց կին է: Միայնակ է: Ձեռքին՝ ոսկեայ ապա- րանջան, մատներում՝ սիկարէթ: Նա նոյնպէս ունի իր մշտական աթոռը: Եւ նայում եմ. նա դանդաղօ- րէն նստում է, վառում է գլանակը, հայեացքը յա- ռում է գալիք հեռուին ու աճշտապէս դուրս քաշում:

Շունը եւ ծառը նրա՛ն էլ են նայում, իրենց մեճա- խօտութիւնից բաժին հանելով նաեւ դրացին: Բայց, կինը անհաղորդ է մնում նրանց: Նա այս կեանքում՝ ի՛ր մեճախօտութիւնը ունի:

Զգալով իմ ներկայութիւնը, դրացին գլուխն իմ կողմն է շրջում: Նա արդէն գիտէ, որ իրենց շէնքում տարին մէկ-երկու անգամ յայտնում է հայաստանցի մի կին, որը այցելութեան է գալիս իր դստերին եւ փեսային: Ամէն անգամ, ինչպէս եւ առաջին՝ դրա- ցին ծագում է ինձ եւ ասում. bon jour, իմանալով տնեցիներից՝ ինչպէս է արաբերէն «բարե»-ը, եւ պատասխանում եմ նրան. մարհապա: Գրացին կըր- կին ծագում է, այս անգամ՝ նաեւ աչքերով: Եւ այս- պէս ամէն առաւօտ. նա՛ bon jour, ես՛ մարհապա: Վերջ ի վերջոյ ես սովորեցնում եմ նրան բարեւել ինձ արաբերէն:

- Մարհապա, քիֆիք,- միմիանց տեսնելով, ար- դէն միանգամայն բացակայում ենք մենք, եւ ամէն մէկս նստում մեր աթոռակներին:

Արեւակի ամէն առաւօտ հորիզոնից հասնելով նոյն կէտին, որը մեր պատշգամի դիմաց պերճօրէն ծաղկած ծառի գագաթն է, տեսնում է նոյն տեսա- րանը,- երկու կին՝ եւ եւ դրացին, նստած են իրենց պատշգամներում: Գրացին ծխում է, ես՝ սուրճ եմ խմում: Չգիտեմ, թէ ի՞նչ է մտածում այդ պահին Ա- րեւակը: Բայց ստոյգ գիտեմ՝ ինչ է մտածում եւ. որքա՛ն ներդաշն են սուրճի գաւաթը եւ սիկարէթը, ասես միմիանց լրացնող էություններ լինեն... Օ՛, սքանչելի, առեղծոածային աշխարհ. սուրճը, սիկա- րէթ, մենք՝ եւ եւ... իմ սէրը, որ կայ եւ չկայ: Այդ փունջն, ասես մեր կեանքի մեղեդին լինի: Այն հըն- չում է մեր հոգեզմայլ ժամերի բոլորով, մեր հոգու ու մարմնագործեան դիրքաթիւնը նուազներով:

Այսպէս եմ մտածում եւ: Գրացին նոյնպէս ինչ- որ բանէ մտածում: Եւ տեսնում եմ, ինչպէս է նա վեր կենում եւ շրջում իւր ինչ: Ինչ-որ բան է ա- սում արաբերէն: Եւ նրան չեմ հասկանում: Եւ խուլ- լալ-համրերի մնջախաղ եմ խաղում, թէ՛ ներող ե- ղէք, սիրելի տիկին, եւ ձեզ չեմ հասկանում, շատ եմ

ցաւում դրա համար, բայց իսկապէս, ոչ մի բան չեմ հասկանում, գուցէ ձեզ ի՞նչ որ բան է հարկատր, գուցէ՛ մէկ ուրիշին դիմե՛ք-ասե՛ք:

Գրացին մէկ ուրիշին դիմե՛լ-ասե՛լ չէ՛ ուզում: Ինձ է ուզում ասել:

Արեւակը մեղաւոր ժպտում է. ափսոսում է, երեւի, որ չունի թարգմանչի կարգավիճակ: Մտածում եմ. լաւ, եւ հիմա ի՞նչ անեն, ինչպէ՛ս հասկանամ դրա- ցին սասածը: - Նայի՛ր, ուշադիր նայի՛ր,- խոչնդում եւ յուշում է ծառը: Նայում եմ: Մեր պատշգամները շատ մօտիկ են մէկը մէկու՝ ճիշդ-ճիշդ մէկ ձեռքի տարածութեան վրայ: Մեր՝ խուլ-համրերի մնջա- խաղից ձանձրացած, դրացին ոտքի է ելնում, ընդ- հուպ մօտենում է բազրիկին: Նա ինձ մեկնում է իր վտած սիկարէթը: Հիւրասիրում է: Աստուած իմ... Ծփոթում եմ մի պահ... Եթէ հիմա նորից ճանաչե՛մ միեւնոյն է նա դարձեալ ոչ մի բան չի հասկանալ: Եւ ուզում եմ, որ նա գո՛նէ կարող աչքերիս մէջ ա- րագավազ մտքատողը. շնորհակալ եմ, տիկին, բայց ես... ես ծխող չեմ, հասկանում էք... ընդհանրապէս չեմ ծխում, սիկարէտ չեմ գնում, տանս, պալուսակիս մէջ սիկարէթ չեմ պահում: Եւ ծխում եմ միայն... միայն նրա՛ հետ: Երբ միայն մենք ենք. նա, եւ, տաք սուրճի երկու նախազարդ գաւաթ եւ սիկարէթ: Գա՛ արարողութիւն է, հասկանո՞ւմ էք, տիկին, եւ ոչ մե- կի հետ, անգամ ինքս ինձ հետ չեմ ծխում: Եւ չեմ կարող դաւաճանել: Ներող եղէք, տիկին:

Արեւակը, ծառը, շունը սպասում են. հասկացա՞ւ արդե՞ք ինձ դրացին: Չհասկացա՞ւ: Նա երկարում է ոսկեայ ապարանջանով ձեռքը: Եւ կարդում եմ նրա՛ աչքերում արագավազ մտքատողը - տիկին՛, հա- յաստանցի հիւր մեր Պորճ Համուտում, այս հրաշա- յիլ առատեան ժամին մենք միշտ միասին եւ մեճակ նստում ենք մեր պատշգամներում: Եւ ծխում եմ, դուր՝ սուրճ էք խմում: Գե՛՛ ինչ կը լինի, եթէ դուք էլ ծխէք, այդպէս մենք գո՛նէ մի քիչ մեճակ չենք լինի, գո՛նէ միքի՛ք միասին, դէ՛, տիկին՛...:

Եւ հասկանում եմ նրան: Եւ մեկնում եմ նրան իմ սուրճի գաւաթը: Թող կրկնակի մեճակ չլինենք, այլ՝ միքի՛ք եւ միքի՛ք միասին: Գրացին ծպտում է ինձ: Պատրաստակամօրէն մեկնում է ձեռքը սուրճի գա- ւաթին:

Արեւակը արդէն ծառի սաղարթից դէպի աչ է թեքում: Բոլորը սպասում են՝ ի՞նչ է հիմա լինելու: Եւ հարցը կարդում եմ շան աչքերում, ծառի ծաղ- կած ողկոյզներում, ամպի ետեւից ծպտացող արեւի ճառագայթում: Նրանք փոքր-ինչ գարմացած են. նրանք չունեն «դաւաճանել-չդաւաճանել», «մեճակ- ոչ մեճակ» լինելու բարոյութիւն: Նրանք միշտ մի բնական ամբողջութիւն են: Նայում եմ: Զննիչ եւ հետաքրքրախոյզ: Պահ անց Արեւակը, ծառը, շունը տեսնում են, ինչպէս իրենց դիմացի շէնքի երկու մերձակալ պատշգամներում կանգնած կանայք փո- խանակում են միմիանց հետ սիկարէտը եւ սուրճի գաւաթը:

Արաք դրացին հանելիօրէն կում է անում իմ անու- շաբոյր սուրճից: Եւ անթաքոյց հանդիմով քաշում եմ իր գլանակի ծուխը:

Այս պահին, որը չգիտես ինչու, որպէս մի ամ- բողջ յաւերժութիւն, սեպագրում է գիտակցութեան մէջ՝ 2008 թուական է, Փետրուար է, օրը՝ Ուրբաթ, լոյս առաւօտ ժամը 9:30-ը: Պէլորոս է, Պորճ Հա- մուտ...:

Ողջո՛յն բոլոր նրանց, ով այս պահին սիրտ-սրտի նստած, իրար հետ սուրճ են խմում, Երեւանո՛ւ:

Թ.ԱՄԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ ԹԻԵՐՈՎ

Ընթացիկ տարուան 1 Յունուարի դրու- թեամբ, Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայի կազմին մէջ ընդ- գրկուած են 72 ակադեմիկոսներ եւ 53 թղթակից-անդամներ, որոնցմէ 39 ակա- դեմիկոսներ եւ 27 թղթակից-անդամներ կ'աշխատին ակադեմիայի համակարգէն դուրս: Այս տուեալները հրապարակած է Գիտութիւններու ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսեանը, գե- կոյցով մը հանդէս գալով ակադեմիայի տա- րեկան ընդհանուր ժողովին ընթացքին:

Մարտիրոսեանի համաձայն, Յունուար 1-ի դրութեամբ ակադեմիայի աշխատող- ներուն ընդհանուր թիւը կը կազմէ 3777, որոնց շարքին գիտաշխատողներ՝ 2131 (դոկտորներ՝ 339, թեկնածուներ՝ 1007), գիտաշխատողներ առանց գիտական աս- տիճանի՝ 785:

2007-ի ընթացքին ակադեմիայի հա- մակարգին մէջ աշխատանքի ընդունուած են 140 երիտասարդ մասնագետներ, որոն-

ցմէ 41-ը ընթացիկ տարուան շրջանա- արտներ են: Պաշտպանուած են 10 դոկ- տորական եւ 52 թեկնածուական ատենա- խօսութիւններ:

Այստեղ տարի Գիտութիւններու ազ- գային ակադեմիայի ամբողջ համակար- գին համար պետական ֆինանսաւորու- մով նախատեսուած էր 3 միլիար եւ 150 միլիոն դրամ: Պետական ֆինանսաւոր- ման ծաւալին մէջ աշխատավարձը կազ- մած է 87 տոկոս, իսկ մնացած բոլոր ծախսերը՝ 12 տոկոս:

Ժողովին ողջոյնի խօսքով հանդէս ե- կած է նախագահ Սերժ Սարգսեանը: Ներ- կայ եղած են վարչապետ Տիգրան Սարգս- եանը, կրթութեան եւ գիտութեան նախա- րար Լեւոն Մկրտչեանը, Ազգային ժողովի գիտութեան, կրթութեան, մշակոյթի եւ ե- ռիտասարդութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Հրանդ Յա- կոբեանը, բուհերու ղեկավարներ եւ յայտնի գիտնականներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԾ ԼՈՒՐԵՐ

Յամաշխարհային Դրամատունը սնըն- դամթերք արտադրող բոլոր պետութիւ- ներէն պահանջեց հրաժարիլ արտածուող ապրանքներու վրայ սահմանուած տուր- քերէն: Դրամատան կարծիքով, արտածու- մի համար դրուած յանելեալ տուրքերը ա- ւելի կը խորացնեն համաշխարհային սնըն- դամթերքի ճգնաժամը: Մասնագետներու կար- ծիքով, բրիւնի եւ եգիպտացորենի սակե- րը յառաջիկային այ բարձր պիտի մնան:

Իրանի գլխաւոր դատախազ՝ Ջոր- պան Ալի Նաջաֆապատին արգելք հան- դիսացաւ Barbie տիկնիկներու եւ արեւմուտ- եան այլ խաղալիքներու Իրան մուտքին: Ան ըսաւ, թէ այդօրինակ խաղալիքներ ժխտական ազդեցութիւն կ'ունենան Ի- րանի մշակութային եւ ընկերային կեան- քին վրայ:

Barbie խաղալիքներէն շատ հեռու, բայց Իրանի հետ առնչուած հարցով մը, Եւրոմիութիւնը կանաչ լոյս տուաւ Իրանի խոչըրդագոյն՝ «Միլիլի» դրամատան հետ առեւտրական բոլոր գործողութիւնները սառեցնելու առաջարկութեան: «Միլիլի» դրամատունը կը կնքատուի Եւրոմիութեան հետ Իրանի ունեցած փոխանակումներու հիմնական խողովակը:

Եւրոխորհրդարանի հարաւային Կովկասի հարցերու յանձնաժողովի նա- խագահ՝ Մարի Աննա Իսլէր Պէկոնի այցելեց Աբխազիոյ Կալի շրջանը: Այցե- լութեան ընթացքին քննարկեցին կողմը անգամ մը եւս յայտարարեց, թէ Վրաս- տանէն անկախութիւն հռչակած Աբխազ- իան դարձեալ Վրաստանի մէկ մասը դարձնելը անհնար է:

«Աբխազիա չի վերադառնար Վրաս- տանի կազմ: Ղեկորաստ եղբ երկխօսու- թիւն վարել միայն հաւասարութեան հի- մունքներով, յայտարարեց Կալի շրջանի մէջ Աբխազիոյ նախագահի լիազօր ներ- կայացուցիչ՝ Ռուսլան Քիշմարիա:

Միացեալ Նահանգներու ութ ծերա- կուտականներ, որոնց մէջ՝ Հիլըրի Գլին- թըն, Պարաք Օպամա եւ ճոն Մաքէյն

ՆԱԹՕ-ին ներկայացուցին փաստաթուղթ մը, ուր կը պահանջեն վճռական աջակ- ցութիւն ցուցաբերել Ուքրանիոյ եւ Վրաս- տանի ՆԱԹՕ-ի անդամակցութեան: Ծե- րակոյտի մնացեալ անդամները նոյնպէս իրենց հաւանութիւնը տուին ներկայա- ցուած փաստաթուղթին:

Աֆղանիստանի մէջ գտնուող ամե- րիկեան զօրքերը լայնածիր յարձակողա- կան գործողութեան մը ձեռնարկեցին Թալիպանի կողմէ գրաւուած Գարմսեր քաղաքին վրայ: Ամերիկեան ցամաքային ուժերուն կ'օգնեն ծովայիններ եւ կործա- նիչներ:

Առայժմ, յստակ չէ, թէ որքան զօրաւոր պիտի ըլլայ Թալիպանի դիմադրութիւնը: Ամերիկացի հրամանատարները կըսեն, թէ Թալիպան լաւապէս պատրաստուած էր յարձակումին դէմ:

Ինքնահռչակ հիւսիսային Կիպրոսի թրջական հանրապետութեան նախագահ Մեմէթ Ալի Թալաթ՝ Կիպրոսի նախագահ Տիմոթիոս Կիպրիսի հրահրած կողմի թրջա- կան մտք հրաւիրեց: Ան դիտել տուաւ, թէ Կիպրոսի ֆիզիկական սահմանները շատ օգտա- կար քայլ մը պիտի ըլլայ:

«Ես անգամ մը այցելած եմ հարաւային Կիպրոս: Այժմ կարգը անոր է: Մենք զիջք կը սպասենք հիւսիսային Կիպրոսի մէջ: Նման ծեստ մը ծայր աստիճան օգտակար կրնայ դառնալ կողմի խնդիրը կարգա- տրելու ուղղութեամբ», յայտարարեց խո- րամանկ Թալաթ, արեւելեան, որ ինք ո- ռոշած է մինչեւ այս տարուան աւարտը լուծել Կիպրոսի տագնապը:

Մոսկուայի մէջ, Ռուսիոյ արտաքին գործոց նախարար՝ Սերկէյ Լավրով ըն- դունեց տեսնել իր պաշտօնակիցին՝ Ապու Պեքր Ալլա Ղարպիին: Վերջինս, Մոսկուա կատարած իր եռօրեայ այցելութեան ըն- թացքին պիտի քննարկէ երկու պետու- թիւններու յուզող հարցեր, որոնց մէջ՝ իս- րայէլ-պաղեստինեան բանակցութիւննե- րը, լիբանանեան թղթածրարը եւ Իրաքի կացութիւնը:

ՊԱՅՏՈՒԿԸ ԲԱՌ												
Կ	Ն	Ի	Ք	Ա	Ն	Ա	Փ	Ծ	Ա	Ն	Կ	Ի
Ռ	Ո	Ի	Ն	Ա	Յ	Ն	Ո	Ն	Ի	Ն	Յ	Ն
Ա	Ք	Տ	Ի	Ա	Ր	Ի	Ր	Պ	Ն	Լ	Ա	Ս
Յ	Ղ	Ծ	Ա	Կ	Ա	Ի	Մ	Ա	Ա	Կ	Ե	Մ
Ն	Ա	Պ	Ո	Ռ	Ն	Ր	Ա	Տ	Փ	Ր	Ղ	Ր
Ա	Ն	Ա	Ն	Ր	Ա	Ա	Յ	Ա	Ո	Ո	Ե	Տ
Յ	Յ	Ր	Մ	Հ	Ո	Տ	Ս	Կ	Ր	Ղ	Ր	Ն
Ծ	Ք	Ք	Ն	Ա	Ր	Տ	Ր	Ե	Տ	Ո	Գ	Ն
Ն	Կ	Ր	Ա	Տ	Ա	Գ	Ո	Ո	Տ	Ո	Գ	Ա
Ա	Փ	Ա	Ր	Թ	Ա	Մ	Ե	Ի	Ի	Ա	Ճ	Ա
Տ	Մ	Ի	Ո	Ս	Ի	Ո	Ք	Գ	Մ	Ա	Կ	Ա
Ա	Ա	Ի	Ա	Ջ	Ա	Ն	Ն	Ի	Խ	Ա	Տ	Ք
Մ	Ղ	Ր	Ի	Կ	Ա	Ջ	Ե	Ա	Ն	Լ	Ե	Ս
Թ	Ա	Ծ	Մ	Ր	Ա	Կ	Ն	Մ	Յ	Խ	Ե	Ր
Ն	Տ	Ի	Ո	Ա	Ի	Ք	Ի	Ն	Ո	Ի	Ա	Ս
Ա	Ն	Գ	Ք	Ի	Տ	Ո	Ի	Ն	Կ	Կ	Ո	Ն
Կ	Ա	Ա	Ա	Ի	Ս	Ա	Տ	Ն	Ա	Ն	Կ	Ր
Ա	Ծ	Կ	Ի	Ի	Ա	Ե	Կ	Ն	Գ	Ե	Ղ	Ջ
Ջ	Է	Ա	Ո	Ն	Փ	Ա	Ա	Ա	Ե	Ր	Ա	Ս
Ե	Ն	Փ	Ր	Կ	Ա	Ն	Ք	Լ	Ն	Ն	Յ	Ն

ԱՅԵՐ	ՅԱ.ՃԱ.Խ	ՏԱ.Ռ.Ա.ՏՈԿ
ԱՆԴԱՄ	ՅԱ.ՃԱ.Խ.ԱՆ.Ք	ՏԵՍԱՆԿԻԻՆ
ԱՆԿԻԻՆ	ՅԱ.Մ.Ս.ՅՐ	ՏԻԱՐ
ԱՆՑՔ	ՅԱ.Մ.Ր	ՏՆԱՆԿ
ԱՍՈՒՆ	ՅԱ.ՅՏԱՐԱՐ	ՏՆԱՇԷՆ
ԱՏԱՄ	ՅԱ.ՆԴՈՒԳՆ	ՏՈՀՄ
ԱՐԻԻՆ		ՏՈՒՆԿ
ԱՐՄԱՏ	ՆԱ.ԻՆԻՔ	
ԱՐՄԱՏԱԿԱՆ	ՆԱ.ՓՈՐՏ	ՅԱՆԿԱՊԱՏ
ԱԻԱՋԱՆ	ՆԿԱՐ (2)	ՅԱՆՑԱՌ
ԱԻԱՆԳ	ՆՈՒԱՍՏ	ՅԱՆՑԵՆԻ
ԱԻԻՆ	ՆՊԱՍՏ	ՅԱՐԱՍԻ
	ՆՊԱՍՏԱՌՈՐ	ՅԻՐՈՒՑԱՆ
	ՆՊԱՍԱԿ	ՅԼԱՄԱՐՏ
ԳԱՍԱՐԱՆ		
ԳԱՏԱՐԿ	ՇԱՂԿԱՊ	ՓԱԿԱԳԻԾ
ԳԱՐՊԱՍ	ՇԵՂԱԿԻ	ՓԱՆԱՔԻ
ԳԱՐԱՊԱՍԵԼ (2)	ՇՆԱՏԱՄ	ՓԱՍՏ
ԳԵՂՋ	ՇՈՒԱՌՆ	ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
ԳԵՂՋԱՆ	ՇՊԱՐ	ՓԱՐԹԱՄ
ԳՄԱԿ	ՇՐՋԱՆ	ՓԱՐԵԼԻ
ԳՈՒՔՍ		ՓՐԿԱՆՔ
ԵՋԱԿԱՆ	ՈՂՈՐԿ	
ԵՋԱԿԻ	ՈՐՈՏՈՒՄ	
ԵՂԵՐԳ	ՈՒՆԱՅՆ	ՔԱՂՈՑ
ԵՐԱՄԱԿ	ՈՒՍԵԱԼ	ՔԱՋԱՐԻ
ԵՐԱՍՏ		